ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/6500/02/24 ք. Երևան
17 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Քոմփ Պրո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«Քոմփ Պրո» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից վերջինիս և «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև 17.06.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/56» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.07.2024թ.-ի ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությունից պետք է պահանջել 17.06.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/56» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.07.2024թ.-ի ծանուցման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Քոմփ Պրո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից վերջինիս և «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի միջև 17.06.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/56» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.07.2024թ.-ի ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել 17.06.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/56» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.07.2024թ.-ի ծանուցման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի նոյեմբերի 28-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.17 16:21:42 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am